

Կենսաբանություն

Ք. Գ. ԱՎԱԳՅԱՆ, Բ. Ի. ԳԻՆՎԱՐՅԱՆ, Ն. Ն. ՍԻՄՈՆՅԱՆ

ԾԱՂԿԱԶՈՐԻ ԿԻՐՃԻ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կատարված է Սաղկաձորի կիրճի կաղնի-բոխու, սոճու և նորատունկ անտառների բուսականության համեմատական ուսումնասիրությունը: Նշված են այդ անտառների սիեուզիաները, ասոցիացիաները և հարկայնությունը: Ուսումնասիրությունների ժամանակ հայտնաբերված են բարձրակարգ բույսերի 283 տեսակներ (մամուռների 56 տեսակ), որոնք պատկանում են 183 ցեղերի և ընդգրկված են 64 ընտանիքներում:

Հարավային Հայաստանի կենտրոնական մասը կամ այսպես կոչված Կենտրոնական Հայաստանը [1] բավական սակավանտառ է: Անտառապատ տարածությունը այստեղ չի գերազանցում 10 տոկոսը: Դրանք կաղնուտներ են և կաղնի-բոխու անտառներ, որոնք մնացորդային են: Մեր կողմից ուսումնասիրվել են Սաղկաձորի կիրճի անտառային բուսականությունը՝ հատկապես կաղնի-բոխու, սոճու և արհեստական խառը սաղարթավոր նորատունկ անտառները:

Վերոհիշյալ անտառների բուսականության մասին առանձին տեղեկություններ կան Գ. Գ. Յարոշենկոյի [1] և Հ. Կ. Մաղաբյանի աշխատանքներում [2]:

1977—1979 թվականներին կատարված ուսումնասիրությունների ժամանակ հայտնաբերվել են բարձրակարգ բույսերի 283 տեսակներ, որոնք պատկանում են 183 ցեղերի և ընդգրկվում են 64 ընտանիքներում: Նրանց մեջ մամուռներից հայտնաբերված է 56 տեսակներ, որոնք պատկանում են 23 ցեղերի և ընդգրկվում են 14 ընտանիքներում:

Սաղկաձորի կիրճում հիմնականում գերակշռում են կաղնի-բոխու անտառները, որոնք ունեն մացառուտային ծագում: Նրանք զբաղեցնում են Սաղկույայց լեռնաշղթայի հյուսիս-արևելյան դիրքադրությունը՝ տարածվելով ծովի մակերևույթից 1700—2200 մ բարձրության վրա [1]:

Կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Սաղկաձորի կիրճում կաղնի-բոխու անտառներին բնորոշ է ծառա-թփային հարուստ բուսականություն: Այս անտառներում կարելի է տարբերել գլխավոր և երկրորդական ծառեր: Որպես գլխավոր ծառատեսակ հանդես է գալիս կաղնի արևելյանը (*Quercus macranthera* F. A. M.), իսկ երկրորդային՝ բոխի կովկասյանը (*Carpinus caucasica* Grossh.): Հիմնական ծառերից բացի անտառում աճում են մի շարք ուղեկից ծառատեսակներ: Դրանք են *Acer platanoides* L., *Betula pendula* Roth., *Ulmus glabra* Huds., *Salix capreae* L., *Tilia cordata* Mill.: Կաղնի-բոխու անտառները հարուստ են վայրի պտոստու տեսակներով և հատապտուղներով, որոնցից հատկապես աչքի են ընկնում՝ *Pyrus salicifolia* Pall., *Prunus divaricata* Ledb., *Rosa sosnovskiana* Tamamsch. et Fam., *Grossularia reinclana* (L.) Mill., *Rubus buschii* Grossh. ex Sinjkova, *Fragaria vesca* L. և այլն: Անտառներում լավ է արտահայտված ենթատառը, որը ներկայացված է մի շարք թփերով՝ *Padus avium* Mill., *Sorbus aucuparia*

L., *Rhamnus cathartica* L., *Lonicera orientalis* Lam., *Lonicera caucasica* Pall., *Viburnum lantana* L. և ուրիշներ:

Մաղկաձորի կիրճի կաղնի-բոխուտային անտառներում լավ է արտահայտված նաև խոտային բուսականությունը, որը հատկապես բացատններում առատ է և խիտ: Հարուստ է խոտածածկի ֆլորիստական կազմը: Դժվար չէ նկատել, որ կաղնի-բոխու անտառի բոլոր հատվածներում խոտածածկը միատեսակ չէ, այլ նրա բնույթը և տեսակային կազմը փոփոխվում է՝ կապված էկոլոգիական գործոնների փոփոխման հետ: Այս տեսակետից էլ անտառի բացատններում և անտառահզրերին գերակշռում են Fabaceae, Lamiaceae, Asteraceae, Rosaceae, Scrophulariaceae ընտանիքների մի շարք լուսասեր տեսակներ (*Prunella vulgaris* L., *Thymus kotschyanus* Boiss. et Hoh., *Achillea millefolium* L., *Cichorium intybus* L., *Artemisia absinthium* L., *Filipendula vulgaris* Moench., *Sanguisorba officinalis* L., *Coronilla varia* L., *Lotus caucasicus* Kuprian., *Trifolium pratense* L., *Rhinanthus alectrolophus* (Scop.) Pall. և այլն): Անտառի խորքում խոտածածկը հիմնականում ներկայացնում են Apiaceae, Rubiaceae, Fabaceae, Asteraceae ընտանիքների ստվերադիմացկուն և խոնավասեր ներկայացուցիչները (*Astrantia maxima* Pall., *Pimpinella rhodantha* Boiss., *Asperula arvensis* L., *Galium coronatum* Sibth. et Smith., *Vicia grandiflora* Scop., *Lathyrus roseus* Stev., *Lapsana intermedia* Bieb., և այլն):

Հետաքրքիր է այն, որ մի քանի ընտանիքների՝ Ranunculaceae, Primulaceae, Scrophulariaceae, որոշ ներկայացուցիչներ բնորոշ են և անտառաբացատին, և բուն անտառին, այլ կերպ ասած, նախք օժտված են հարմարվողականության առավել լայն ամպլիտուդով (*Ranunculus caucasicus* Bieb., *Primula macrocalyx* Bunge, *Veronica gentianoides* Vahl): Կաղնի-բոխու անտառների խոտածածկում բազմաքանակ են հացադդի բույսերը, որոնք հանդիպում են անտառի բոլոր հատվածներում՝ *Deschampsia caespitosa* (L.) Beauv., *Poa compressa* L., *P. bulbosa* L. և ուրիշներ: Այստեղ մեր կողմից ուսումնասիրվել է նաև բուսականության ուղղաձիգ տարաբաշխումը կամ հարկայնությունը: Այստեղ կարելի է տարբերել 7 հիմնական հարկեր: Առաջին հարկը զբաղեցնում են կաղնին, բոխին, երկրորդը՝ հացենին, տանձենին, լորենին, երրորդը՝ թխկին, կեչին, թեղին, սալորենին, չորրորդը՝ ցախակեռասը, բունչին, թխենին, հինգերորդը՝ հաղարջենին, կոկոռչենին, մասրենին: Վեցերորդ հարկը զբաղեցնում են բոլոր խոտաբույսերը, այստեղ են դասվում նաև պտերանմանները և թփերից՝ գայլահատը: Վերջին 7-րդ հարկը զբաղեցնում են մամուանմանները: Մամուային հարկը բնութագրվում է տեսակների բազմազանությամբ, տիպիկ անտառային և տափաստանային տարրերի զուգորդմամբ և ներկայացված է հիմնականում Amblystegiaceae, Mniaceae, Brachytheciaceae, Bryaceae, Leskeaceae, Timmiaceae, Pottiaceae, Trichostomaceae, Orthotrichaceae ընտանիքների տեսակներով:

Այս անտառներում կարելի է առանձնացնել ծառա-թփային, խոտային, պտերային և մամուային սինուզիաներ, որոնք բնորոշվում են հարուստ տեսակային կազմով: Ընդ որում պտերային սինուզիան բնորոշ է կաղնի-բոխու անտառների այնպիսի մասերին, որտեղ հողը գերխոնավ է և զբաղեցնում է հյուսիսային դիրքադրություններ: Այսպիսի անտառում խոտային սինուզիայում գերիշխում է տափուռ վարդագույնը (*Lathyrus roseus* Stev.), որի հետ միասին որոշ ցենոզներում գերակշռում են աստղաբույս մեծը (*Astrantia maxima* Pall.), սնդրուկը (*Polygonatum polyanthemum* (Bieb.) Dietr.), մատիտեղ դեղատնայինը (*Polygonum verticillatum* (L.) All.), գետնաստղ դաշտայինը (*Asperula arvensis* L.), խոպեղինչ սպիտակը (*Lamium album* L.): Իսկ այն մասերում, որտեղ համեմատաբար չոր է, խոտային սինուզիայում գերիշխում են *Lapsana intermedia* Bieb., *Poa nemoralis* L., *Dactylis glomerata* L., իսկ որոշ ցենոզներում՝ *Campanula latifolia* L., *Betonica macrantha* C. Koch., *Delphinium flexuosum* Bieb.: Հողի վրա տարածված մամուային սինուզիաների

խտուծյունը կախված է խոնավությունից և լուսավորության ինտենսիվությունից: Հնդհանուր առմամբ, անտառի խորքում գերակշռում են պլերոկարպ մամուռները *Amblystegiaceae*, *Leskeaceae*, *Brachytheciaceae* ընտանիքներից, որոնք տեղ-տեղ առաջացնում են խոշոր, խիտ ճիմեր:

Մամուռների տարածումը զգալի չափով կախված է խոտածածկի խտությունից: Խոտաբույսերի առատությունը ճնշող ազդեցություն է ունենում մամուռային սինուզիաների զարգացման վրա, որի պատճառով էլ որոշ բուսական ֆորմացիաներում մամուռային հարկը բացակայում է:

Կաղնի-բոխու անտառներում կարելի է առանձնացնել մի շարք տիրապետող ասոցիացիաներ՝ կաղնի-բոխի-մոզրուկ, կաղնի-բոխի-զանգակ, կաղնի-բոխի-գետնաստղ, կաղնի-ցախակեռաս-տափոլոռ և կաղնի-ցախակեռաս-խարբուկ:

Այստեղ լավ է արտահայտված ֆենոսպեկտների հերթափոխումը: Գարնանը բուսական ասպեկտում աչքի են ընկնում շուշանազգիների, կաղամբազգիների, գորտնուկազգիների, գնարբուկազգիների, գաղտրիկազգիների ընտանիքների ներկայացուցիչները: Ամռան սկզբին բուսական ասպեկտը միանգամից փոխվում է. խոտածածկում գերակշռում են խլածաղկազգիների, վարդազգիների, խորդենազգիների ընտանիքների ներկայացուցիչները: Հետագայում բուսական ասպեկտը կազմում են թիթեռնածաղկավորների, հովանոցազգիների, հացազգիների ընտանիքները: Իսկ բարդածաղկավորների ընտանիքի առանձին ներկայացուցիչներ խոտածածկում գերակշռում են ամռան սկզբից մինչև ուշ աշուն:

Կաղնի-բոխուտներում խոտային բուսականությունը շատ հարուստ է անտառային տարրերով (*Delphinium flexuosum* Bieb., *Viola odorata* L., *Coronilla varia* L., *Valeriana officinalis* L. և այլն): Մակայն զուտ անտառային խոտաբույսերին՝ սիլվանտներին, ընկերակցում են նաև մարգագետնային տարրերը (*Gentiana gelida* Bieb., *Ornithogalum tenuifolium* Guss., *Geum urbanum* L., *Anemone caucasica* Willd., *Trifolium trichocephalum* Bieb. և այլն): Անտառի առավել լուսավոր հատվածներում կան նաև տափաստանային (*Achillea millefolium* L., *Cerinthe minor* L., *Helianthemum nummularium* (L.) Mill., *Artemisia absinthium* L.) մարգագետնա-տափաստանային (*Prunella laciniata* L., *Ajuga orientalis* L.), կիսաանապատային (*Alyssum tortuosum* Willd., *A. minus* (L.) Rothm.), կոսմոպոլիտ. (*Cichorium intybus* L., *Taraxacum officinale* Wigg., *Plantago major* L., *Urtica dioica* L.), ուղեբալ (*Adonis aestivalis* L., *Tussilago farfara* L.) խոտաբույսեր:

Մամուռներից խոնավ վայրերում գերակշռում են *Mnium undulatum* Hedw., *M. cuspidatum* Hedw., *M. stellare* Hedw., *Amblystegium serpens* (Hedw.) Br. Sch. et Gmb., *Brachythecium velutinum* (Hedw.) Br. Sch. et Gmb., *B. rivulare* (Br.) Sch. et Gmb., *Timmia bavarica* Hessel. տեսակները:

Խիստ խոնավ պայմաններում հայտնաբերված է *Bryum schleicheri* Smwaegr. տեսակը: Որպես էպիլիտներ հանդես են գալիս *Anomodon apiculatus* Bryol. eur., *Orthotrichum anomalum* Hedw., *Leskea polycarpa* Hedw. տեսակները: էպիբսիլներից հայտնաբերված են *Mnium stellare* և *Bryum capillare* Hedw. տեսակները:

Անտառի բացատներում և եզրերում ավելի լավ են ներկայացված համեմատաբար բերմորժ տեսակները՝ *Tortula ruralis* (Hedw.) Grome, *Bryum capillare*, *Brachythecium campestre* (Bruch.) Br. Sch. et Gmb., *Campothecium lutescens* (Hudw.) Bryol. eur., *Ceratodon purpureus* (Hudw.) Brid.:

Սոճու անտառը Մաղկաձորի կիրճում փոքր տարածություն է գրավում: Վերջինս բացառապես ներկայացված է մեկ տեսակով՝ *Pinus kochiana* Klotzsch ex C. Koch., և առաջացնում է միայն մաքուր անտառներ: Այստեղ համարյա լրիվ բացակայում է ենթանտառը, բացառություն են կազմում արոսե-

նու և մասրենու հատուկենտ թփերը, որոնք երբեմն հանդիպում են անտառա-
եզրին:

Սոճու անտառում խոտային բուսականությունը չափազանց թույլ է արտա-
հայտված: Խոտածածկը նոսր է, միապաղաղ, աղբատ է նաև նրա ֆլորիստական
կազմը, չկան գերիշխող տեսակներ: Այստեղ տարածված են երիցուկի, իշակաթ-
նուկի մի քանի տեսակներ, խատուտիկը և հացազգիների սակավաքանակ ներ-
կայացուցիչներ:

Սոճու անտառում կարելի է տարբերել ծառային, խոտային և մամռային
հարկեր: Կարելի է առանձնացնել թույլ արտահայտված երեք սինուզիաները՝
ծառային, խոտային և մամռային: Մամռային հարկը սակավատեսակ է: Մա-
մուռներն աճում են ոչ մեծ ճիմերով մեծ մասամբ ծառերի արմատամերձ մա-
սերում: Տարածված են *Dicranum scoparium* Hedw., *Thuidium abietinum*
(Schwaegr) Br. Sch. et Gmb., *Tortula ruralis*, *Bryum capillare*, *Brachyt-
hecium albicans* (Hedw.) Br. Sch. et Gmb., *Hypnum cupressiforme* Hedw.
տեսակները: Համեմատաբար սովորող վայրերում նշված են *Hylocomium*
splendens (Hedw.) Br. Sch. et Gmb., որոնք հաճախ *Ptilium crista castrensis*
(Hedw.) DC Not.-ի հետ խառնված երբեմն առաջացնում են խոշոր սինուզիա-
ներ: *Ռելիեֆի* ոչ մեծ զոգավորություններում տարածված է *Rhytidium rugo-
sum* (Hedw.) Lindb. տեսակը: Որպես էպիլիտներ նշված են *Tortula ruralis*-ը
և *Leucodon sciuroides* (Hedw.) Schwaegr.-ը:

Սոճուտում վատ է արտահայտված բուսական ասպեկտների հերթափոխու-
մը, կապված խոտածածկի թույլ զարգացածության հետ: Այստեղ հանդիպում
են փոքրաթիվ անտառային տարրեր (*Asyneuma canescens* (Waldst. et Kit.)
Griseb. et Schenk., *Campanula stevenii* Stev., *Fragaria vesca* L., *Viola*
odorata L., *Stelaria persica* Boiss.): Ավելի հաճախ են հանդիպում տափաս-
տանային տարրերը (*Matricaria perforata* Merat., *Echium russicum* J. F.
Gmel): Մարգագետնային տարրերը բացակայում են:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում խոռը-սաղարթավոր ան-
տառը: Սա համեմատաբար երիտասարդ նորատունկ արհեստական անտառ է,
որին բնորոշ է հարուստ ծառաթփային և խոտային բուսականություն: Այստեղ
կան բազմաթիվ տնկիներ, որոնց շարքում մեծաքանակ են վայրի պտղատու
ծառերը՝ տանձենի, սալորենի, խնձորենի, աճում են կաղնին, բոխին, հացենին,
թխկին, թփերից՝ դժնիկը, բռնշին, մասրենին, ճապկին, մերկասերմերից՝ սոճին
և այլն: Այս անտառում խոտային բուսականությունը լավ է արտահայտված:
Խոտածածկում զլխավորապես գերակշռում են լուսասեր և շորադիմացկուն տե-
սակները:

Նորատունկ անտառում խոտային բուսականությունը բնորոշվում է նրա-
նով, որ գերակշռում են հետևյալ տարրերը՝ տափաստանային (*Achillea*
millefolium L., *Artemisia absinthium* L., *Centaurea cyanus* L., *Helichrisum*
plicatum DC, *H. graveolens* (Bieb.) Sweet., *Cerinthe minor* L., *Tanacetum*
chiliophyllum (Fisch. et C. A. Mey.) Sch. Bip., *Sanguisorba officinalis* L.)
և մարգագետնային (*Lotus caucasicus* Kuprian., *Trifolium pratense* L.,
T. trichocephalum Bieb., *Geranium sanguineum* L., *Ranunculus illyricus* L.,
Rhinanthus major L. և այլն): Հանդիպում են մի շարք կոսմոպոլիտ-ոռոզերալ
տարրեր (*Cichorium intybus* L., *Taraxacum officinale* Wigg., *Thlaspi ar-
vense* L. և ուրիշներ): Փոքր թիվ են կազմում սիլվանտները (կզմուխը՝ *Inula*
cordata, *I. auriculata* Boiss. et Bal., զանգակը՝ *Campanula stevenii* Stev.,
թրաշուռանը՝ *Gladiolus atroviolaceus* Boiss., կաթնախոտը՝ *Polygala anat-
olica* Boiss. et Heldr. և այլն): Այս անտառներում մամուռները ներկայացված
են քսերոֆիտ տեսակներով՝ *Tortula ruralis*, *Thuidium abietinum*, *Brach-
ythecium campestre*, *B. capillare*, *Bryum caespiticium* Hedw., *Ceratodon*
purpureus, *B. argenteum* Hedw.: Անտառային տեսակներից կարելի է նշել
Amblystegium serpens, *Leskea polycarpa*, *Hypnum cupressiforme*: Ավելի
քիչ են հանդիպում *Mnium cuspidatum*, *Timmia bavarica*, *Thuidium recogni-*

tum (Hedw.) Lindb. տեսակները: Մամուռային հարկում զգալիորեն տարածված են ուղեբրալ տեսակները:

Մաղկաձորի կիրճի վերոհիշյալ անտառներում կատարված դիտումները ցույց տվեցին, որ մի շարք վաղ գարնանային բուսատեսակներ ներկայումս շատ ավելի հազվադեպ են հանդիպում, քան առաջներում: Դրանցից են *Anemone caucasica* Willd., *Viola odorata* L., *Scilla armena* Grossh., *Muscari caucasicum* (Griseb.) Baker., *Muscari szovitsianum* Baker., *Gladiolus atrovioleaceus* Boiss., *Corydalis angustifolia* (Bieb.) DC, որոնց սպառնում է խստառ ոչնչացման վտանգը: Ըստ էության այս հարցում բնական գործոնից բացի նշանակալի բացասական դեր է կատարում նաև անտրոպոգեն գործոնը՝ մարդը, բնության նկատմամբ ցուցաբերած իր անխոհեմ վերաբերմունքով:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. Ярошенко Г. Д. Лесная растительность Центральной части Южной Армении.— Бюллетень Бот. сада АН Арм. ССР, Ереван, 1952, № 12.
1. Магакян А. К. Растительность Арм. ССР. Л.: изд-во АН СССР, 1941.

К. Г. АВАКЯН, Б. И. ДИЛЬДАРЯН, Н. С. СИМОНЯН

ЛЕСНАЯ РАСТИТЕЛЬНОСТЬ ЦАХКАДЗОРСКОГО УЩЕЛЬЯ

Резюме

В течение 1977—79 гг. проведено изучение растительности и флористического состава дубово-грабовых лесов, сосняка Цахкадзорского ущелья и смешанных насаждений. Сравнительное исследование в этих лесах выявило преобладающие виды в древесно-кустарниковом, травяном и моховом синузиях. В дубово-грабовых лесах выделены несколько господствующих ассоциаций. Некоторые виды цветковых, *Anemone caucasica*, *Scilla armenia*, *Corydalis angustifolia*, *Muscari caucasicus*, *M. szovitsianum*, все реже встречаются в весенней флоре лесов Цахкадзорского ущелья.